ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

ՁԵՌՆԱՐԿ

Հեղինակ՝

Անի Խեչոյան (իրավաբանական գիտությունների թեկնածու)

Բովանդակություն

Ներածություն

Բաժին 1. Կրթական ծրագրերի մշակումը

1.1. Կրթական ծրագրերի մշակման գործընթացի հիմնական քայլերը

1.2. Կրթական ծրագրի բովանդակությունը և կառուցվածքը

Բաժին 2. Ուսումնական պլանը և դասընթացների ծրագրերը

2.1. Դասընթացների ծրագրերը

2.2. Դասընթացների կրթական վերջնարդյունքները

2.3. Ուսումնառության, դասավանդման և գնահատման ռազմավարությունը

Բաժին 3. Կրթական ծրագրերի վերանայումը

3.1. Կրթական ծրագրերի վերանայման գործընթացի հիմնական քայլերը

3.2. Բենչմարքինգ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Designing Undergraduate Degree Programmes, Dr Rebecca Taylor, University of Portsmouth
2. Edited by David Newlands, University of Aberdeen
3. Handbook 2: Programme Design, September 2014,University of Derby
4. Programme and course design handbook, University of Wellington, Centre for Academic Development and Academic Office, 2015
5. Programme design and development handbook, University of Bradford, Issue 2. January 2015,
6. Govern. Fostering autonomy and accountability: Development of State-of-the-Art Higher education management systems for efficient changes in line with Bologna principles.Training kit. 2015
7. Guidelines for First Degree Programmes, University of Southampton, July, 2014
8. Program and Course Approval Handbook, Third Edition, California Community Colleges, March 2009

Ներածություն

Հյուսիսային համալսարանի առաքելությունն է ապահովել կրթություն, որը հնարավորություն կտա ուսանողներին առավելագույնս դրսևորել իրենց ներուժը, արդյունավետ գործունեություն իրականացնել ժամանակակից փոփոխվող միջավայրում: Համալսարանը խրախուսում է ուսանողներին՝ իրենց մասնակցությունն ունենալու կայուն և զարգացած հասարակության կայացման մեջ:

Ձեռնարկը նպատակ ունի սահմանել կրթական ծրագրերի ուղենիշներ, որոնք բխում են նաև Հյուսիսային համալսարանի առաքելությունից և ռազմավարությունից: Եթե ձեռնարկում նախատեսված օրինակները վերաբերում են Հյուսիսային համալսարանում իրականացվող կրթական ծրագրերին, ապա դրանում ներառված ընդհանուր սկզբունքները կարող են ունենալ ավելի լայն ակադեմիական կիրառություն:

Կրթական ծրագրի մշակման գործընթացը ակադեմիական մտածողության արդյունք է: Այն ենթադրում է և աշխատաշուկայի, և կոնկրետ դասընթացների իմացություն, անհրաժեշտության դեպքում նաև կրթության ոլորտի համապատասխան նորմատիվ ակտերի իմացություն: Կրթական ծրագրի մշակման գործընթացում կարևոր են նաև ստեղծագործական մտածողությունը, ինչպես նաև ծրագրի իրականացման ռեսուրսային հիմնավորվածությունը:

Գործընթացի առաջին քայլը կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի ստեղծումն է:

Բաժին 1. Կրթական ծրագրերի մշակումը

1.1. Կրթական ծրագրերի մշակման գործընթացի հիմնական

Կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի ստեղծումը

Ծրագրի մշակման աշխատանքային խումբը ստեղծվում է ծրագրի մշակման, փոփոխման կամ վերանայման սկզբնական փուլում: Աշխատանքային խումբը պատասխանատու է ծրագիրը մշակելու և վերանայելու, ծրագրին վերաբերող փաստաթղթերը կազմելու և այն բուհի համապատասխան կառույցներին հաստատման ներկայացնելու համար: Ծրագրի մշակման աշխատանքային խմբում պետք է ներգրավված լինեն ծրագրին առնչվող բոլոր ֆակուլտետների ներկայացուցիչները, այդ թվում՝

- կրթական ծրագրի մշակման աշխատանքային խմբի ղեկավար՝ համապատասխան ֆակուլտետից,
- բուհի ակադեմիական միջավայրի ներկայացուցիչներ համապատասխան ոլորտում մասնագիտական եզրակացություններ ներկայացնելու համար
- ուսանողներ,
- այլ շահառուներ և ակադեմիական գործընկերներ:

Այս փուլում կարևոր և անհրաժեշտ է շահակիցների հետ համագործակցության համապատասխան մեխանիզմների ստեղծումը՝ կրթական ծրագրերը համագործակցված մշակելու նպատակով: Կարևոր է հատկապես բուհի դասախոսական և վարչական անձնակազմի ներգրավումը կրթական ծրագրի մշակման փուլին, որպեսզի հետագայում վերջիններս հնարավորություն ունենան առավել արդյունավետ մասնակցություն ցուցաբերել ծրագրի վերանայման կամ բարելավման փուլում: Այլ շահակիցների թվում կարող են լինել բուհի շրջանավարտները, հնարավոր դիմորդները, արտաքին փորձագետները, գործատուները և այլն:

Կրթական ծրագրի մշակման աշխատանքային խմբի ղեկավարը

Կրթական ծրագրի մշակման աշխատանքային խմբի ղեկավարը պատասխանատու է՝

- ծրագրի մշակման և վերանայման փուլերում համալսարանի համապատասխան կառույցների, մասնավորապես Որակի ապահովման կառույցի հետ համագործակցության համար,
- ծրագրին առնչվող համապատասխան ֆակուլտետի դեկանի հետ համագործակցության ապահովման համար կրթական ծրագրի այն դասընթացների մասով, որոնք դասավանդվում են տվյալ ֆակուլտետում,
- կրթական ոլորտի համապատասխան պետական մարմինների, աշխատաշուկայի ներկայացուցիչների, ուսանողների հետ կապը ապահովելու համար,
- կրթական ծրագրի մշակումը սահմանված ժամանակահատվածում ապահովելու համար,
- կրթական ծրագրին առնչվող փաստաթղթերը ի մի բերելու համար:

Կրթական ծրագրին վերաբերող հիմնական փաստաթղթերը

Կրթական ծրագրին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթեր հավաքելը ծրագրի մշակման հաջորդ կարևոր փուլն է: Համապատասխան փաստաթղթերը կարող են տարբեր լինել՝ պայմանավորված այն հանգամանքով՝ մշակվո՞ւմ է նոր ծրագիր, թե՞ վերանայվում է գործող կրթական ծրագիրը: Որպես կանոն, կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

- ուսումնական պլանը և ուսումնական գործընթացի ժամանակացույցը,
- կրթական ծրագրի բենչմարքինգի հիմքերը,
- որակավորումների ազգային շրջանակը,
- կրթական ոլորտին վերաբերող նորմատիվ իրավական ակտերը,
- դասընթացների առարկայական ծրագրերը,
- կրթական ծրագրի դիմորդներին ներկայացվող պահանջները:

Կրթական ծրագրի հնարավոր դիմորդների բնութագիրը

Ցանկալի է, որ կրթական ծրագիրն ունենա ընդգրկուն բնույթ, իսկ ծրագրի մշակման և մշտադիտարկման գործընթացում հավասարաչափ մասնակցություն ցուցաբերեն ծրագրի բոլոր շահակիցները: Այս տեսակետից օգտակար է նաև պարզել, թե ովքեր են ծրագրի հնարավոր դիմորդները և ինչ բնութագիր ունեն նրանք:

Հետաքրքրական կարող են լինել, օրինակ, հետևյալ հարցերը՝

- կրթական ի՞նչ հիմք կարող են նրանք ունենալ,
- ընդհանուր զարգացածության ի՞նչ մակարդակ կարող են ունենալ,
- ի՞նչ կենսափորձ կարող են ունենալ,
- ի՞նչ անկնալիքներ նրանք կարող են ունենալ ծրագրից,
- ի՞նչ նախնական գիտելիքներ և հմտություններ պետք է ունենան նրանք ծրագրին մասնակցելու համար,
- ընդունելության ի՞նչ այլ պահանջներ կարող են սահմանվել նրանց նկատմամբ:

Այս տեղեկատվության առկայությունը կարող է նպաստել ծրագրի հնարավոր դիմորդների տարաբնույթ ակնկալիքները ծրագրից պարզելու համար՝ հաշվի առնելով նրանց գիտելիքների և հմտությունների տարբեր մակարդակները, հնարավորինս ընդգրկուն դարձնելով կրթական ծրագրում նախատեսված դասընթացները և դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:

Կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի խնդիրները

Կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի խնդիրները կրթական ծրագրի մշակման փուլում հետևյալն են՝

- ծրագրի առաքելության և նպատակների հստակեցումը,
- ծրագրի հիմնական դրույթների քննարկումը,
- կրթական ծրագրի դասընթացների և ծրագրի միջև կապի ապահովումը,
- կրթական ծրագրի նպատակների և նախատեսվող վերջնարդյունքների մշակումը,
- կրթական ծրագրում ուսումնառության, գնահատման և հետադարձ կապի ապահովման ռազմավարության մշակումը:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները և նպատակները պետք է սահմանվեն մատչելի, որպեսզի դրանք հասկանալի լինեն ուսանողների, գործատուների և այլ

շահակիցների համար: Սկզբում սահմանվում են կրթական ծրագրի, ապա առանձին դասընթացների կրթական վերջնարդյունքները: Կրթական ծրագրերը պետք է մշակվեն այնպես, որպեսզի դրա բաղադրիչները ապահովեն լիարժեք ուսումնառության հնարավորություն ուսանողի համար: Հստակ սահմանված նպատակները և նախատեսվող կրթական վերջնարդյունքները և դրանց հետ փոխկապված գնահատման եղանակները չափազանց կարևոր նախապայման են հավաստիանալու, որ կրթական ծրագիրը պատրաստ է իրականացման: Կրթական ծրագիրը պետք է համապատասխանի նաև բուհի առաքելությամբ սահմանված՝ բուհի շրջանավարտի մասնագիտական բնութագրին, կրթական ոլորտի պետական չափորոշիչներին, բուհի ինստիտուցիոնալ պահանջներին:

Սխեմա 1. Կրթական ծրագրի մշակման և հաստատման գործընթացը (Հյուսիսային համալսարանի օրինակով)



1.2. Կրթական ծրագրի բովանդակությունը և կառուցվածքը

Կրթական ծրագրի մշակումը ստեղծագործական գործընթաց է, որի ժամանակ ստեղծագործական մտածելակերպի անհրաժեշտությունը զգացվում է կրթական ծրագրի վերաբերյալ հնարավոր իրարամերժ մոտեցումները համապատասխանեցնելու փուլում (օրինակ, ուսանողների ակնկալիքները և աշխատաշուկայի պահանջները համադրելու, դասընթացի հաջող իրականացման համար դասավանդողների ունակությունները և առկա ռեսուրսները համադրելու և այլ փուլերում):

Այդուհանդերձ, կրթական ծրագրի մշակման ընթացքում ցանկալի է առաջնորդվել հետևյալ ընդհանուր մոտեցումներով՝

- • կրթական ծրագիրը պետք է հիմնված լինի բուհի առաքելության և զարգացման ռազմավարական ծրագրի վրա և հաշվի առնի դրա առաջնահերթությունները,
- • կարևոր նախադրյալներ ստեղծի մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձեռքբերման համար,
- •նպաստի կրթական ծրագրի շրջանավարտի հետազոտական հմտությունների զարգացմանը,
- • կրթական ծրագրի հիմնական բաղադրիչները արտահայտված լինեն ծրագրի դասընթացների առարկայական ծրագրերում,
- • կրթական ծրագրի իրականացման միջոցները պետք է հստակ մշակված և ընկալելի լինեն ծրագրի շահակիցների համար:

Կրթական ծրագրի հաջող մշակման ընթացքը ենթադրում է դրա հետևյալ բաղադրիչների հաջորդական մշակումը՝

Կրթական ծրագրի հիմնավորումը

Կրթական ծրագրի հիմնավորումը ներառում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են կրթական ծրագրի հնարավոր դիմորդներին ներկայացվող պահանջները, կրթական ծրագրի պահանջարկվածությունը, ծրագրի շրջանավարտներին ներկայացվող արտաքին և մասնագիտական պահանջները, ծրագրի համապատասխանությունը

ինստիտուցիոնալ և այլ պահանջներին (բուհի ռազմավարություն, ֆակուլտետի ռազմավարություն, որակավորումների ազգային շրջանակ, կրթության ոլորտի նորմատիվ իրավական ակտեր և այլն):

Կրթական ծրագրի նպատակները և ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը

Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման այս փուլում հստակեցվում են կրթական ծրագրի նպատակները, ծրագրի հաջող ավարտին շրջանավարտի կողմից ձեռքբերվող գիտելիքները, կարողությունները և հմտությունները, տվյալ մասնագիտական կրթական ծրագրի շրջանավարտի նկատմամբ գործատուների ակնկալիքները:

Կրթական ծրագրի բովանդակությունը և կառուցվածքը

Կրթական ծրագրի մշակման այս փուլում որոշվում է՝ ինչ կառուցվածք պետք է ունենա կրթական ծրագիրը և ինչ հաջորդականություն պետք է ունենան դրա կառուցվածքային տարրերը:

Կրթական ծրագրերի գնահատման կարգը

Մասնագիտական կրթական ծրագրերում գնահատման մեթոդաբանության մշակման գործընթացում առաջնային պետք է լինեն հետևյալ հարցադրումները՝

- կարո՞ղ է արդյոք կրթական ծրագրում սահմանված գնահատման կարգը երաշխավորել ծրագրում նախատեսված հիմնական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը,
- կարո՞ղ է արդյոք կրթական ծրագրում նախատեսված գնահատումը խրախուսել ուսանողների ակտիվ ուսումնառությունը:

Կրթական ծրագրերի մշտադիտարկման կարգը

Կրթական ծրագրերի մշտադիտարկման փուլում առաջնային է մշտադիտարկման համար անհրաժեշտ տեղեկատվության հստակեցումը և այդ տեղեկատվության ձեռքբերման եղանակների սահմանումը:

Կրթական ծրագրերի մշակման վերը նշված փուլերի հաջորդականությունը կարող է տարբերվել, օրինակ՝ կրթական ծրագրի հիմնավորման փուլին որպես առանձին փուլ

կարող է նախորդել դրա համապատասխանության ստուգումը բուհի ռազմավարությանը

Կրթական ծրագրերի իրականացման ռեսուրսները

Կրթական ծրագրի հիմնավորումը

Նախքան նոր կրթական ծրագիր մշակելը շատ կարևոր է հիմնավորել ծրագրի անհրաժեշտությունը, նպատակը և պահանջվածությունը: Նշված խնդիրը կարող է իրականացվել շահակիցների լայն շրջանակի ներգրավմամբ (ուսանողներ, բուհի շրջանավարտների և կարիերայի կենտրոն, բուհի դասախոսական անձնակազմ, գործատուներ և այլն): Նոր մշակվող կրթական ծրագիրը նաև չպետք է անառողջ մրցակցություն ստեղծի այլ բուհերի համանման կրթական ծրագրերի համար:

Կրթական ծրագրերի մշակման ընթացքի և բովանդակության վրա ազդում են տարբեր գործոններ, մասնավորապես, ակադեմիական և մասնագիտական լայն շրջանակների ակնկալիքները, ինչպես նաև համապատասխան պետական կրթական չափորոշիչներն ու նորմատիվները: Ընդ որում, ակադեմիական շրջանակների ակնկալիքները կրթական ծրագրից կարող են տարբերվել կրթական ոլորտի համապատասխան կրթական չափորոշիչներից: Ծրագրի հուսալիությունը ապացուցելու համար անհրաժեշտ է նաև հիմնավորել, որ այն բենչմարքինգի արդյունք է կրթական ոլորտի այլ հաստատությունների և այլ կրթական ծրագրերի հետ:

Աշխատաշուկայի պահանջները կարևոր նախապայման են կրթական ծրագրի հուսալիության համար: Կրթական ծրագրի մշակման գործընթացում պետք է հաշվի առնվեն և գնահատվեն պահանջարկի երկու հնարավոր գործոններ՝ ծրագրի դիմորդների պահանջները, գործատուների պահանջները ծրագրի շրջանավարտներից:

Կրթական ծրագրերի բովանդակության վրա ազդող պայմաններից են նաև կրթության ոլորտի պետական չափորոշիչները, մասնավորապես, Որակավորումների ազգային շրջանակը: Նշված գործոնների միջև հավասարակշռությունը կարող է տարբերվել՝ պայմանավորված մշակվող կրթական ծրագրի մակարդակով: Օրինակ, հետբուհական կրթական ծրագրերի մշակման ընթացքում առաջին խումբ գործոնները (ակադեմիական և մասնագիտական շրջանակների ակնկալիքները կարող են գերակայություն ունենալ ուսանողների կամ գործատուների ակնկալիքների նկատմամբ):

Կրթական ծրագրի մշակման ընթացքում պետք է հաշվի առնել նաև ուսումնառության ռեսուրսները՝ համապատասխան դասավանդող անձնակազմի առկայությունը, տեխնիկական միջոցները, գրադարանը և այլն:

Կրթական ծրագրի հաջող իրականացման նախապայմաններից է կրթական ծրագրում ներգրավված դասավանդողների քանակը և մասնագիտական որակները: Կրթական ծրագրերը պետք է իրականացվեն համապատասխան որակավորում ունեցող փորձառու մասնագետների կողմից: Ծրագրի հուսալիության վերը նշված նախապայմաններն են, որ պետք է հաշվի առնվեն կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի կողմից:

Կրթական ծրագրի համապատասխանեցումը բուհի առաքելությանը և ռազմավարական զարգացման ծրագրին

Բուհի ռազմավարությունն այն փաստաթուղթն է, որը արտահայտում է շրջանավարտի այն որակները, որոնք նա ձեռք է բերում տվյալ բուհը ավարտելիս:

Օրինակ՝ Հյուսիսային համալսարանի առաքելությունն է՝

- տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության առաջնայնությամբ ապահովել տեղեկատվական հասարակության ժամանակակից պահանջներին համապատասխան որակյալ մասնագետների պատրաստումը, կրթության

ոլորտի գլոբալացման, տեղեկատվական հասարակության զարգացման պայմաններում անհատի բարձր մասնագիտական որակների ձևավորումը,

- գիտելիքահեն հասարակության պահանջները բավարարող անհատի մտավոր, քաղաքացիական ու բարոյական որակների ձևավորումը,
- ուսանողների մեջ ազնվության, սեփական գիտելիքի, կարողության նկատմամբ վստահության, հասարակության կողմից առաջադրված որակների և արժեքների ձևավորումն ու ամրապնդումը:

Բուհի առաքելությանը համապատասխան՝համալսարանի կրթական ծրագրերը մշակվում են ոչ միայն ուսանողների մասնագիտական գիտելիքները և կարողությունները, այլև համալսարանի առաքելությամբ սահմանված որակները զարգացնելու, որպես համալսարանի շրջանավարտ՝ ուսանողների խմբային գիտակցությունը ձևավորելու նպատակով:

Բուհի առաքելությանը համապատասխան մշակվում են կրթական ծրագրի նպատակները՝

Օրինակ 1. Հյուսիսային համալսարանի՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ բակալավրի մասնագիտական կրթական ծրագրի նպատակներն են՝

- պատրաստել բարձր մասնագիտական որակներով օժտված մասնագետներ, ովքեր ընդունակ կլինեն մասնագիտական գործունեություն իրականացնելու ազնվության, արդարության և մասնագիտական էթիկայի բարձր չափանիշներին համապատասխան,
- զարգացնել ուսանողների մոտ գիտելիքներ և հմտություններ, որոնք կնպաստեն նրանց մասնագիտական առաջխաղացմանը,
- պատրաստել ուսանողներին՝ որպես հասարակությանը ծառայելուն պատրաստ անհատներ,
- պատրաստել շրջանավարտներ, ովքեր կկարողանան ապրել և աշխատել բազմամշակույթ, գլոբալ միջավայրում,
- պատրաստել իրավաբանի պրակտիկ, տեսական, հանրային և մասնավոր ոլորտների գերազանց մասնագետներ,
- խրախուսել ուսանողների շրջանում իրավունքի և այլ դասընթացների ու մասնագիտությունների միջև կապի արժևորումը:

Մասնագիտության կրթական ծրագիրը ոչ միայն պետք է համապատասխանի բուհի առաքելությանը, որակավորումների ազգային շրջանակին, այլև ֆակուլտետի առաքելությանը և ռազմավարական զարգացման ծրագրի նպատակներին: Օրինակ, համալսարանի «Իրավագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի նպատակները բխում են նաև իրավագիտության ֆակուլտետի առաքելությունից, որն է՝

- պատրաստել իրավաբանի մասնագիտության պատասխանատու և առաջատար կրողներ, որոնք կտիրապետեն մասնագիտական էթիկայի և պրոֆեսիոնալիզմի բարձր չափանիշներին:

Կրթական ծրագրի նպատակների և ծրագրի շրջանավարտի մասնագիտական բնութագրի սահմանումը

Կրթական ծրագրի նախագծման փուլում անհրաժեշտ է հստակեցնել կրթական ծրագրի նպատակները: Մասնագիտության կամ մասնագիտության շրջանակներում մասնագիտացման կրթական ծրագրերի շրջանավարտների մասնագիտական բնութագիրը պետք է իր հիմնական բաղադրիչներով ներառված լինի կրթական ծրագրի դասընթացների առարկայական ծրագրերում: Դա ոչ միայն հնարավորություն է տալիս ուսանողին հստակ պատկերացնել յուրաքանչյուր դասընթացի նշանակությունը տվյալ կրթական ծրագրի համատեքստում, այլև հստակեցնում է կապը կրթական ծրագրի բաղադրիչների՝ մասնավորապես կրթական վերջնարդյունքների կապը դասընթացների կրթական վերջնարդյունքների հետ:

Կրթական ծրագրի բովանդակության և կառուցվածքային բաղադրիչների հաջորդականության սահմանում

Կրթական ծրագրի նպատակների հստակեցումից հետո հաջորդ քայլը ծրագրի բովանդակության սահմանումն է: Ծրագրի բովանդակությունը այն մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հատկությունների ամբողջությունն է, որոնք բնութագրում են տվյալ կրթական ծրագրի շրջանավարտին:

Կրթական ծրագրի բովանդակության մշակման փուլում սահմանվում է նաև այդ բովանդակության ծավալը, կառուցվածքային բաղադրիչների հաջորդականությունը և դրա բաշխումը դասընթացների ծրագրերում:

Կրթական ծրագրում ցանկալի է ներառել հետևյալ կառուցվածքային հիմնական բաղադրիչները՝

- կրթական ծրագրի անվանումը,
- կրթական ծրագրի առաքելությունը և նպատակները,
- կրթական ծրագրի հիմնավորումը,
- կրթական ծրագրի հիմնական փաստաթղթերը (ուսումնական պլան, դասընթացների ծրագրեր, պրակտիկաների ծրագրեր),
- կրթական ծրագրի դիմորդներին ներկայացվող պահանջները,
- կրթական ծրագրի կապը բուհում գործող այլ կրթական ծրագրերի հետ,
- կրթական ծրագրի ենթադրյալ հիմնական թեմաները,
- կրթական ծրագրում ուսումնառության մեթոդները,
- կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները,
- կրթական ծրագրի գործողության պլանը:

Դասընթացների ներառումը կրթական ծրագրում (դասընթացների քարտեզի մշակումը)

Դասընթացների քարտեզի մշակումը հնարավորություն է տալիս բացահայտել, թե որքանով է կրթական ծրագիրը բխում բուհի առաքելությունից և ռազմավարական զարգացման ծրագրից, և որքանով են կրթական ծրագրի դասընթացներից յուրաքանչյուրի կրթական վերջնարդյունքները նպաստում ընդհանուր առմամբ կրթական ծրագրի իրականացմանը (տես սխեմա 2): Ցանկալի է, որպեսզի բուհում իրականացվող կրթական ծրագրերի վերջնարդյունքներից առնվազն մեկը արտահայտված լինի բուհի ռազմավարական զարգացման ծրագրում, թեև կրթական ծրագրի դասընթացների կրթական վերջնարդյունքներից ոչ բոլորը կարող են արտահայտվել տվյալ կրթական ծրագրում:

Սխեմա 2. <u>Կապը բուհի շրջանավարտի բնութագրի, կրթական ծրագրի շրջանավարտի բնութագրի, դասընթացի կրթական խնդիրների միջև</u>



Կրթական ծրագրի գնահատման ռազմավարության մշակումը

Գնահատումը այն միջոցն է, որը թույլ է տալիս պարզել՝ արդյո՞ք կրթական ծրագրի շրջանավարտը համապատասխանում է տվյալ կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական բնութագրին: Թեև գնահատման մանրամասն կարգը արտահայտվում է կրթական ծրագրի դասընթացների ծրագրերում, կրթական ծրագրի գնահատման ընդհանուր մեթոդաբանության մշակումը կարևոր նախապայման է ուսանողի՝ կրթական ծրագրով նախատեսված ընդհանուր և բուն մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացման համար: Գնահատման ընդհանուր մեթոդաբանության առկայությունը թույլ է տալիս ունենալ ուսանողի գնահատման մեթոդների բազմազանություն և խուսափել գնահատման մեկ կամ մի քանի ձևերի գերակշռումից:

Կրթական ծրագրի գնահատման կարգը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների և դասախոսական անձնակազմի աշխատածավալը և ծանրաբեռնվածությունը: Գնահատման ձևերը պետք է իրատեսական լինեն ուսանողների և դասախոսական անձնակազմի համար, արտահայտեն կրթական ծրագրով նախատեսված դասընթացների հիմնական հարցերը և հիմնված լինեն կրթական ծրագրի նկատմամբ կայուն ակնկալիքների վրա (օրինակ, ֆակուլտետի շրջանակներում ընդհանուր մոտեցումներ մշակվեն հանձնարարվող խմբային աշխատանքների աշխատածավալի վերաբերյալ):

Կրթական ծրագրի մշտադիտարկման ռազմավարության սահմանումը

Կրթական ծրագրերի մշակման գործընթացի սկզբնական կարևոր փուլերից է կրթական ծրագրի վերանայման և մշտադիտարկմանը ներկայացվող ինստիտուցիոնալ և արտաքին պահանջները հաշվի առնելը: Կարևոր է ինչպես կրթական ծրագրի մաս կազմող առանձին դասընթացների շարունակական պահանջարկվածության, այնպես էլ, ընդհանուր առմամբ, կրթական ծրագրի բովանդակության և կառուցվածքի, շարունակական պահանջարկվածության գնահատումը ծրագրի հիմնական շահակիցների կողմից բուհի ներսում և դրանից դուրս: Կրթական ծրագրի մշտադիտարկման հաջող իրականացման համար անհրաժեշտ է սահմանել՝ ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ հավաքել այդ նպատակով և այդ տեղեկատվությունը ստանալու եղանակները:

Կրթական ծրագրի իրականացման ռեսուրսների սահմանումը

Բուհը պետք է հիմնավորի, որ ունի անհրաժեշտ ռեսուրսներ կրթական ծրագիրը նախատեսված մակարդակով իրականացնելու համար: Ռեսուրսները ներառում են կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դասախոսական անձնակազմի առկայությունը, բուհի կողմից կրթական ծրագրին հատկացվող նյութական միջոցները՝ գրադարանային ֆոնդը, անհրաժեշտ սարքավորումները, տեխնիկան և այլն:

Սխեմա 3. Կրթական ծրագրի մշակման գործընթացը



Ուսանողակենտրոն կրթական ծրագրերի կարևոր բաղադրիչներից է դրանց շրջանավարտների ընդհանուր մշակութային և սոցիալ-անձնական կոմպետենցիաների զարգացումը ապահովող բուհական միջավայրը: Մասնագիտական կրթական ծրագրերում նշված բաղադրիչի ներառումը խնդիր ունի նպաստել կրթական ծրագրի շրջանավարտների սոցիալական ադապտացիայի բարելավմանը, այնպիսի անձի ձևավորմանը, որը կենսունակ է փոփոխվող սոցիալական և բնական միջավայրում, ունակ է ինքնորոշվել և ինքնաիրացվել հասարակության մեջ՝ չխաթարելով դրա այլ անդամների իրավունքները և արժանապատվությունը, ուսանողների ինտելեկտուալ, հոգևոր, մշակութային և բարոյական զարգացման պահանջմունքների առավելագույնս բավարարմանը:

Բաժին 2.

Ուսումնական պլանը և դասընթացների ծրագրերը

Կրթական ծրագիրը ներառում է մոդուլների և դասընթացների որոշակի հաջորդականություն (ուսումնական պլանը), սակայն այն դասընթացների և մոդուլների պարզ հանրագումար չէ: Շատ կարևոր է կապը դասընթացների բաղադրիչների և կրթական ծրագրի միջև:

Դասընթացների, այդ թվում՝ մոդուլների միջև կառուցվածքային կապերը ուսումնական պլանում կարող է ապահովվել հետևյալ սկզբունքները հաշվի առնելով՝

2.1.Դասընթացների ծրագրերը

Դասընթացները և մոդուլներն այն միջոցներն են, որոնց շնորհիվ ուսանողը ստանում է իր ցանկացած որակավորումը: Յուրաքանչյուր դասընթացի կամ մոդուլի կառուցվածքը և բովանդակությունը պայմանավորում է ուսանողի ակնկալիքները ինչպես դասավանդողներից, այնպես էլ իրենցից՝ ուսանողներից:

Դասընթացը առաջնային օղակն է ուսանողի և կրթական ծրագրի միջև, այս տեսակետից կարևոր է դասընթացի կառուցվածքի և բովանդակության ճիշտ սահմանումը:

Դասընթացի ծրագրի կառուցվածքը՝

Դասընթացի ծրագրի առաջարկվող կառուցվածքում ցանկալի է նախատեսել հետևյալ կառուցվածքային բաղադրիչները՝

Դասընթացի նախապայմանները

Դասընթացի նախապայմանները կարևոր դեր են կատարում դասընթացների միջև կապը ապահովելու համար: Դասընթացի նախապայմանները սահմանում են այն գիտելիքը և իմացությունը, որն արդեն պետք է ունենան ուսանողները տվյալ դասընթացի կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու համար: Յուրաքանչյուր դասընթաց պետք է ունենա իր նախապայմանները (բացառությամբ այն դասընթացների, որոնցում նախապայմանների փոխարեն նշվում են կրթական ծրագրի ընդունելության պահանջները):

Կարևոր է, որպեսզի դասընթացի նախապայմանները ձևակերպված լինեն հնարավորինս բաց: Կրթական ծրագրի շրջանակներում մեկ կամ մի քանի նախորդ դասընթացներ ավարտած լինելը ուղղակի նշելու փոխարեն դասընթացի նախապայմաններում պետք է նշվեն այն գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի կամ մոդուլի հաջող ավարտի համար:

Դասընթացների հաջորդականությունը

Կրթական որակավորումների մակարդակները և դրանց բնութագրիչները սահմանված են որակավորումների ազգային շրջանակով:

Կարևոր է, որ կրթական ծրագրի կառուցվածքում արտահայտվի աստիճանակարգությունը ուսումնառության մակարդակների միջև:

Աստիճանակարգության սահմանման համար որպես չափանիշներ կարող են հանդես գալ ուսանողներին հանձնարարվող առաջադրանքների համեմատական բարդությունը և հանձնարարված աշխատանքի կատարման ինքնուրույնության մակարդակը: Կրթական ծրագրի մշակման գործընթացում պետք է ապահովվի այս երկու չափանիշների փոխկապվածությունը:

Օրինակ

Դասընթացների ներառման հաջորդականությունը և տրամաբանությունը Հյուսիսային համալսարանի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրում՝

Ծրագրերի ուսումնասիրման հերթականությունը և տրամաբանությունը

(Hard)



Կրթական ծրագիրը մշակող աշխատանքային խմբի կողմից հատուկ ուշադրություն պետք է դարձվի ուսումնական պլանում ներառված դասընթացների և մոդուլների միջև կապին: Կրթական ծրագրի կառուցվածքում, մասնավորապես դրանում ներառված դասընթացներում, սկզբում պետք է հստակ սահմանել նախատեսվող կրթական վերջնարդյունքները, դասընթացի կամ մոդուլի ուսումնասիրման համար նախապայման հանդիսացող դասընթացները, կապը նախապայման դասընթացների և դրանց կրթական վերջնարդյունքների միջև:

Կրթական ծրագրի նպատակների լիարժեք իրականացման համար այն պետք է ներառի՝

- հիմնական (պարտադիր դասընթացներ),
- կամընտրական դասընթացներ (կամ մոդուլներ):

Պարտադիր դասընթացները պետք է անցնեն բոլոր ուսանողները կոնկրետ կրթական ծրագրի շրջանակներում:

Կամընտրական դասընթացները ուսանողի ընտրությամբ այն դասընթացներն են, որոնք իրենցից ներկայացնում են հիմնական (պարտադիր) դասընթացների որոշակի թեմաների մանրամասնում և որոնք կոչված են ընդլայնել ուսանողի գիտելիքները կոնկրետ ոլորտում:

Կրթական ծրագրի մշակման գործընթացի կարևոր հարցադրումներից է ուսումնական պլանի, այսպես կոչված բաց կամ փակ լինելը: Փակ ուսումնական պլանը փոքր հնարավորություններ է նախատեսում ուսանողի համար դասընթացների ընտրության հարցում:

Բաց ուսումնական պլանը հնարավորություն է տալիս ուսանողներին առաջարկել իրենց մոտեցումները կրթական ծրագրի մշակման գործընթացում:

Ի լրումն ակադեմիական պահանջների՝ կրթական ծրագրի մշակման գործընթացում պետք է հաշվի առնել նաև կրթական ծրագրերում ներառված ուսանողների քանակը և որակական բնութագիրը, կրթական ծրագրի իրականացմանը ներգրավված դասավանդողների քանակը և մասնագիտական որակավորումը:

Կրթական ծրագրում ներգրավված դասավանդող անձնակազմի որակական բնութագիրը կրթական ծրագրի հաջող իրականացման համար հաճախակի հանդիպող խոչընդոտներից է: Երբեմն դասավանդող անձնակազմի կարողությունները բավարար չեն ակադեմիական լրջություն ունեցող ուսումնական պլան մշակելու համար:

Կրթական ծրագրի մշակման ընթացքում առաջացող կարևոր հարցերից է նաև դրանում ներգրավված ուսանողների որակական բնութագիրը և քանակը, ինչը ուսումնառության հնարավորությունների վրա ազդող կարևոր գործոններից է:

Կրթական ծրագրի մշակման գործընթացի կարևոր հարցերից է նաև դրանում դասընթացների ընտրության հնարավորությունը ողջամիտ սահմաններում հատկապես կրթական ծրագրի իրականացման առավել ուշ փուլերում: Դասընթացների ընտրությունը լայն հնարավորություն է տալիս ուսանողներին ընտրել իրենց հետաքրքրություններին և մասնագիտական հեռանկարներին համապատասխան դասընթացներ:

Դասընթացի թեմաները

Դասընթացների ծրագրի վերաբերյալ գոյություն ունեն մի շարք մոտեցումներ, մասնավորապես՝ ներքևից վերև մոտեցումը նախատեսում է սկզբում ծրագրի բոլոր համապատասխան թեմաների ընտրություն, ապա դրանց միավորում՝ միասնական դասընթացի ծրագիր մշակելու նպատակով: Վերևից ներքև մոտեցումը նախատեսում է դասընթացի ընդհանուր նկարագրի սահմանում, ապա ծրագրի թեմաների ընտրություն դասընթացի ծրագրում:

2.2.Դասընթացի կրթական վերջնարդյունքները

Կրթական վերջնարդյունքը սահմանում է՝ ինչ պետք է գիտենա, հասկանա և կամ կարողանա անել ուսանողը ուսումնառության որոշակի ժամանակահատվածի ավարտից հետո: Ուսումնառության ժամանակահատվածը կարող է ներառել մոդուլի կամ դասընթացի ժամանակահատվածը կամ ընդհանուր առմամբ կրթական ծրագրի իրականացման ժամանակահատվածը:

Կրթական վերջնարդյունքները արտահայտում են ուսումնառության գործընթացի թափանցիկությունը: Հստակ սահմանելով այն ակնկալիքները և չափանիշները, որոնք պետք է ձեռք բերվեն կրեդիտ կամ որակավորում ստանալու համար՝ բավարարվում են և ուսանողների ակնկալիքները, և նրանց դասավանդողների ու գնահատողների, ինչպես նաև պոտենցիալ գործատուների ակնակալիքները, որոնք ցանկանում են հասկանալ՝ ինչ հմտություններ և գիտելիքներ ունեն իրենց մոտ աշխատել ցանկացող շրջանավարտները:

Դասընթացների ծրագրերում սահմանվում են ուսումնառության արդյունքները Որակավորումների ազգային շրջանակում սահմանված կրթական յուրաքանչյուր մակարդակի համար: Որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ) ընդհանուր կողմնորոշիչ համակարգ է, որը կապում է տարբեր որակավորումների մակարդակները միմյանց ստորակարգության սկզբունքով՝ ամենացածրից մինչև ամենաբարձրը: Շրջանակի ութ մակարդակներից յուրաքանչյուրը բնութագրվում է ուսումնառության արդյունքներով, որոնք դասակարգված են երեք խմբի՝ գիտելիք, կարողություն, հմտություն: Դրանք էլ իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի:

Կրթական վերջնարդյունքները պետք է սահմանվեն չափելի և գնահատելի ձևակերպումներով, ընդգրկեն գիտելիքների, հիմնական հմտությունների և ընդհանուր իմացական (կոգնիտիվ) և մասնագիտական հմտությունների ողջ ծավալը: Ստորև բերված են կրթական վերջնարդյունքների ձևակերպման օրինակներ Հյուսիսային համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի դասընթացների ծրագրերից:

<u>Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է՝</u>

՝

ԳԻՏԵՆԱ

Օրինակ 1.

ՀՀ-ում փաստաբանական ծառայության էությունը, ընդհանուր բնութագիրը և փաստաբանական գործունեության սկզբունքները:

ՀՀ փաստաբանների պալատի և դրա մարմինների կազմակերպման և գործունեության կարգն ու լիազորությունները:

Օրինակ 2.

Պետության և իրավունքի բնույթը և էությունը:

Պետության և իրավունքի ծագման, զարգացման հիմնական օրինաչափու-թյունները, պետության տիպերը և ձևերը, դրանց էությունը և ֆունկցիաները:

Պետության մեխանիզմը, իրավունքի համակարգը, իրավական կարգավորման մեխանիզմը և միջոցները:

ԿԱՐՈՂԱՆԱ

Օրինակ 1.

Կիրառել փաստաբանի համար մասնագիտական նշանակություն ունեցող հատկությունները փաստաբանական գործունեության մեջ:

Օրինակ 2.

Կրողանա ներկայացնել ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի մաթեմատիկական և տրամաբանական հիմքերը:

ՏԻՐԱՊԵՏԻ

Օրինակ 1.

Փաստաբանական ծառայության բնագավառում իրավաբանական տերմինալոգիային և մասնագիտական հասկացություններին:

Օրինակ 1.

Իրավական ակտերի հետ աշխատելու, նորմատիվ ակտերի փորձաքննության և իրավունքի մեկնաբանության հմտություններին:

Դասընթացների և մոդուլների կրթական վերջնարդյունքները պետք է համապատասխանեն կրթական վերջնարդյունքների չափանիշներին ոչ միայն ազգային, այլև միջազգային մակարդակում (Որակավորումների եվրոպական շրջանակ բարձրագույն կրթության համար բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի համար, այսպես կոչված, դուբլինյան նկարագրիչները):

Մեթոդական տեսակետից ուսումնառության տարբեր մակարդակներում մտածողության ձևերի առարկայական ձևակերպումների համար սովորաբար հիմք է ընդունվում Բլումի կամ Քրեյթվոլի տաքսոնոմիան (տես սխեմա 4):

Սխեմա4. Կրթական վերջնարդյունքների մակարդակը



Սխեմա 5. Կրթական վերջնարդյունքների մակարդակները ըստ Քրեյթվոլի



Ուսումնառության տարբեր մակարդակները նկարագրելու համար կարող են օգտագործվել տարբեր բայեր (տես սխեմա 6):

Սխեմա 6.Ուսումնառության արդյունքների սահմանման բայեր

Բլումի կողմից առաջարկված հարցերի բուրգի վեց մակարդակները



Վերլուծում	•Համեմատել, դասակարգել, տարբերակել, հետևություններ անել, հետազոտել
Համադրում	•Կազմել, զարգացնել, ձևավորել, միավորել, կառուցել, պատրաստել, կազմակերպել, ծրագրել, հորինել, համեմատել
Գնահատում	•Դատել, հարաբերակցելկշռադատել, քննադատել, փաստարկել, արժևորել, հաշվի առնել, առաջարկել, ամփոփել, գնահատել

Քրեյթվոլի կողմից առաջարկված հարցերի բուրգի վեց մակարդակները

Նյութը հիշել	• Սահմանել, արտասանել, անվանել, պնդել, ընտրել, գտնել
Մեկնաբանել	• Բացատրել, վերաշարադրել, օրինակներ բերել, համեմատել
Կիրառել	• Օգտագործել, գործադրել

Վերլուծել	• Դասակարգել, տարբերակել, կազմակերպել
Ստեղծել	• Ընդհանրացնել, ծրագրել
Գնահատել	• Ստուգել, քննադատել

Բոլոր կրթական վերջնարդյունքները սահմանվում և նկարագրվում են ինչպես ընդհանուր առմամբ կրթական ծրագրի մակարդակում, այնպես էլ դասընթացի (մոդուլի) մակարդակում՝ որակավորումների ազգային շրջանակում սահմանված նկարագրիչներին համապատասխան ուսումնառության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝

- գիտելիքը և իմացությունը,
- գիտելիքի և իմացության կիրառումը,
- դատողություններ անելու կարողությունը,
- հաղորդակցման հմտությունները,
- ինքնուրույն սովորել սովորելը,
- քննադատական և ստեղծագործական մտածելակերպը,
- ինքնագնահատումը,
- ուսումնառության պլանավորումը և կառավարումը:

Կրթական վերջնարդյունքները դասակարգվում են հատուկ մասնագիտական և ընդհանուր կրթական (օրինակ, խնդիրների լուծումը, վերացական մտածողությունը), ինչպես նաև սոցիալական (հաղորդակցման հմտությունները, կոնֆլիկտների լուծումը և այլն) անձնային վերջնարդյունքների (տես սխեմա 7 և 8):

Ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաների օրինակներ Հյուսիսային համալսարանի «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրից՝

Օրինակ 1.

Համընդհանուր կոմպետենցիաներ

Սույն ՄԿԾ յուրացման արդյունքում շրջանավարտը պետք է ունենա հետևյալ կոմպետենցիաները՝

- ունի մտածողության կուլտուրա, ունակ է կատարել ընդհանրացումներ, վերլուծություններ, ընկալել ինֆորմացիան, առաջադրել նպատակներ և ընտրել դրանց հասնելու ուղիներ,
- գիտակցում է իր ապագա մասնագիտության սոցիալական նշանակությունը, տիրապետում է մասնագիտական իրավագիտակցության բավարար մակարդակի:

Սխեմա 7. Կոմպետենցիաների տեսակները



Օրինակ 2.

Մասնագիտական կոմպետենցիաներ

- ունակ է մասնակցելու նորմատիվ իրավական ակտերի մշակմանը իր մասնագիտական գործունեության պրոֆիլին համապատասխան,
- տիրապետում է իրավաբանական փաստաթղթեր կազմելու հմտությունների:

Սխեմա 8. Մասնագիտական կոմպետենցիաների տեսակները



2.3. Դասընթացներում ուսումնառության, դասավանդման և գնահատման ռազմավարությունը

Ուսումնառության գործընթացի զարգացումը պայմանավորված է ոչ միայն դասընթացի բովանդակության և ուսումնառության վերջնարդյունքների սահման-մամբ, այլև այդ ծրագրում ուսումնառության, դասավանդման և գնահատման ռազմավարության սահմանմամբ: Այս տեսակետից կապը կրթական վերջնարդյունք-ների, ուսումնառության, դասավանդման և գնահատման ռազմավարության միջև երաշխիք է այն բանի, որ դասավանդման և գնահատման մոտեցումները և ընդհանրապես ուսումնառության միջավայրը համապատասխանում են կրթական ծրագրի բուն նպատակին, որն է՝ հնարավորություն տալ ուսանողին ձեռք բերելու կրթական ծրագրում նախատեսվող կրթական վերջնարդյունքները:

Գործնականում դա նշանակում է դասընթացների ծրագրում ուսումնառության, դասավանդման և գնահատման ռազմավարության սահմանման գործընթացում ընտրել դասավանդման /ուսումնառության/ այնպիսի մեթոդներ, որոնք օժանդակում և խրախուսում են ուսանողին՝ ձեռք բերելու կրթական ծրագրով նախատեսված կրթական վերջնարդյունքները, մտածելու՝ ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ այդ նպատակի իրականացման համար: Շատ կարևոր է խրախուսել (եթե ոչ պահանջել), ուսանողների կողմից *ինքնուրույն* ուսումնառությունը, որպես կրթական ծրագրի յուրաքանչյուր մակարդակի հաջող հաղթահարման նախապայման: Կարևոր է նաև այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ կրթական ռեսուրսների և ռեսուրսների սահմանումը:

Բուհերում դասավանդումը հաճախ բնութագրվում է ուսումնառության/ դասավանդման մի քանի հիմնական մեթոդների գերակշիռ օգտագործմամբ՝ դասախոսություններ, բանավեճեր, սեմինարներ, լաբորատոր պարապմունքներ, քննարկումներ և այլն: Նախքան նոր ծրագիր մշակելը կարևոր է մտածել՝ նշված մեթոդները կամ դրանցից մի քանիսը որքանով են նախընտրելի՝ ուսանողների

շրջանում անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ձևավորելու, կրթական ծրագրի նախատեսվող կրթական վերջնարդյունքները ձեռք բերելու տեսակետից:

Դասավանդման մեթոդներ մշակելիս ցանկալի է ընտրել այնպիսի մեթոդներ, որոնք խրախուսում են ուսանողակենտրոն, տեղեկատվության ձեռքբերմանն ուղղված ուսումնառության ակտիվ ձևերը: Ուսանողակենտրոն ուսումնառության պայման-ներում ուսանողները ավելի մեծ պատասխանատվություն են դրսևորում իրենց ուսումնառության նկատմամբ, ավելի մեծ է համագործակցությունը ուսանողների և դասավանդողների միջև:

Տեղեկատվության ձեռքբերմանն ուղղված ուսումնառության մեթոդները խրախուսում են ուսանողին ակտիվորեն պատասխաններ փնտրել կարևոր, կրթական ծրագրին առնչվող հարցերի վերաբերյալ՝ դասավանդողների կողմից տեղեկատվության մեխանիկական փոխանցման փոխարեն: Այս մեթոդները խրախուսում են նաև հետազոտություն-դասավանդում կապը և, ընդհանուր առմամբ, շրջանավարտների մասնագիտական բնութագրի ձևավորմանը:

Գնահատման ռազմավարության մշակման ընթացքում կարևոր է ընտրել նաև գնահատման այնպիսի մեթոդներ, որոնք արդարացի և համապատասխան են կրթական ծրագրի հաջող իրականացման տեսակետից: Արդարացիությունը և համապատասխանությունը հիմնական նախապայմանն են կրթական գործընթացի հաջող իրականացման համար: Արդարացի գնահատման ռազմավարության կիրառումը ապահովում է ուսանողների օբյեկտիվ գնահատումը՝ հաշվի առնելով նրանց պահանջներն ու ակնկալիքները: Հավասարապես կարևոր է, որպեսզի գնահատման գործիքները համապատասխանեն գնահատման խնդրին՝ նախատեսվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:

Գնահատումը պետք է խրախուսի ուսումնառությունը: Գնահատման ռազմա-վարության մշակումը պետք է ներառի ինչպես ուսումնառության, այնպես էլ ուսումնառության համար գնահատումը:

Գնահատման ռազմավարության մշակման ընթացքում ցանկալի է՝

- ընտրել գնահատման այնպիսի չափանիշներ, որոնք համապատասխանում են ՈԱՇ –ով տվյալ մակարդակի համար նախատեսված բնութագրիչներին,
- կիրառել գնահատման տարբեր մեթոդներ՝ լայն հնարավորություն տալով անհատապես յուրաքանչյուր ուսանողի դրսևորելու իր գիտելիքները և կարողությունները,
- գնահատումը սկսել փոքր ծավալի առաջադրանքներից, որոնք կարող են կատարվել ժամանակին և ապահովել հետադարձ կապը ուսանողների հետ,
- գնահատման ժամանակ ավելի շատ շեշտադրել ուսանողի առաջընթացը, քան ձախողումները, խրախուսել ուսանողին:
- մտածել՝ արդյոք ուսանողները կարող են մասնակցել գնահատման ռազմավարության և չափանիշների սահմանման գործընթացին:
- ստեղծել հնարավորություններ ուսանողի համար ինքնագնահատման և իր ընկերներին գնահատելու,
- հաշվի առնել դասավանդողների և ուսանողների ծանրաբեռնվածությունը գնահատմանը հատկացվող ժամանակի առումով:
- գնահատման ռազմավարության մեջ հնարավորություններ նախատեսել ուսանողների հետ մշտական հետադարձ կապի համար, համոզվել, որ հետադարձ կապը ողջամիտ և կառուցողական է:
- համոզվել, որ գնահատման ռազմավարության բնույթը և կառուցվածքը անբարենպաստ վիճակում չեն դնում ուսանողների որոշակի խմբի:

Ստորև ներկայացվում է ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդների միջև կապը Հյուսիսային համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրում.

Աղյուսակում ներկայացված են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները՝ դրանց ձևավորմանը միտված դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությամբ: Աղյուսակի առաջին սյունակում ներկայացված են ուսումնական պլանի կրթամասերը, երկրորդում՝ այդ կրթամասերին համապատասխան ուսումնառության արդյունքները, իսկ հաջորդ երեքում՝ դրանց ձևավորմանը միտված մեթոդաբանությունը:

Ուսումնական պլանի կրթամասեր	N	Ուսումնառության արդյունքներ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրը պետք է.	Դասավանդման մեթոդ	Ուսումնառության մեթոդ	Գնահատման մեթոդ
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս	ՈՒԱ 1	Նկարագրի ժամանակակից փիլիսոփայական ուղղությունները, կեցության մասին գիտության հիմնադրույթները, նյութականի և վերացականի հասկացությունները, մատերիայի կազմակերպման ձևերը, սոցիալական գլոբալ զարգացումները:	Խոսքային մեթոդներ[1] (դասախոսություն, զրույց, քննարկում, ուսումնական բանավեճ) և զննական մեթոդներ:	Խմբային և անհատական աշխատանք, վերարտադրողական մեթոդներ, գործնական մեթոդներ:	Բանավոր անհատական հարցում[2], ինքնագնահատում, փոխադարձ գնահատում:
	ՈՒԱ 2	Ներկայացնի հայ ժողովրդի պատմությունը, քննա-դատորեն վերլուծի ազգային և մշազգային քաղաքական գործընթացները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում) և զննական մեթոդներ:	Խմբային և անհատական աշխատանք, վերարտադրողական մեթոդներ, զույգերով աշխատանք, գործնական մեթոդներ:	Բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային)[3] կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 3	Բացատրի մշակութաբանության բարդ հիմնահարցերը:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում) և զննական մեթոդներ:	Խմբային և անհատական աշխատանք, զույգերով աշխատանք, գործնական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն:	Բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 4	Համառոտի և նկարագրի օտար լեզվով գրված գեղարվեստական	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում,	Գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր	Գրավոր հարցում, բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում,

[1] Ե՛վ դասավանդման, և՛ ուսումնառության, և՛ գնահատման մեթոդները այստեղ նկարագրված են ընդհանուր գծերով, առավել մանրամասն նախատեսվում է ներկայացնել յուրաքանչյուր դասընթացի առարկայական ծրագրի համապատասխան բաժնում:

[2] Բանավոր ներկայացումների ընթացքում հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝ բովանդակությունը և առաջացած հարցերի պատասխանները, խոսքի տրամաբանական կառուցվածքը, առարկայի իմացությունը, կապը լսարանի հետ:

[3] Խմբային աշխատանքի պարագայում հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝ թիմային աշխատանքի ներկայացումը, բովանդակությունը և եզրահանգումները, թիմային աշխատանքին մասնակցելու աստիճանը, թիմային աշխատանքի ձևավորված հմտությունները:

Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթաման		երկերը, գիտական աշխատանքները և փաստաթղթերը:	բանավեճ) և զննական մեթոդներ:	(դիդակտիկական, դերային, ճանաչողական):	փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 5	Բացատրի իրավական փաստաթղթերից օգտվելու հմտությունները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում,բանավեճ) և զննական մեթոդներ:	Տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, մասնակցություն քննարկումներին:	Բանավոր անհատական հարցում, գրավոր հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 6	Օգտագործի ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, կարողանա աշխատել գլոբալ համացանցում:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում) և զննական մեթոդներ:	Տեղեկատվության ինքնուրույն որոնում համացանցում, անհրաժեշտ գրականության բեռնում և վերլուծություն, նոր ձեռք բերված տեղեկատվության մշակում, վերլուծություն, ինքնուրույն աշխատանքի ներկայացում:	Բանավոր անհատական հարցում, գրավոր հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 7	Բնութագրի հոգեբանության, գեղագիտության, բարոյագիտության հիմունքները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ:	Վերարտադրողական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն, անհատական աշխատանք:	Բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 8	Նկարագրի տնտեսագիտության տեսության հիմնա-դրույթները և արդի քաղաքագիտական հայեցակարգերը:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ:	Վերարտադրողական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն, անհատական աշխատանք:	Բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:

	ՈՒԱ 9	Նկարագրի դժբախտ պատահարների, տարերային աղետների դեպքում բնակչության առաջին բժշկական օգնություն տրամադրելու միջոցները, թվարկի քաղաքացիական պաշտպանության հիմնական մեթոդները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական), պրոբլեմային իրավիճակի վերլուծություն:	Համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 10	Ներկայացնի ժամանակակից բնագիտության հիմնա-կան հայեցակարգերը, բնապահպանական գլոբալ և տա-բածաշրջանային հիմնախնդիրները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ:	Խմբային, անհատական և զույգերով աշխատանք. տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, պրոբլեմային իրավիճակի վերլուծություն:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 11	Կիրառի ֆիզիկական դաստիարակության, առողջության պահպանման ու ամրապնդման ինքնուրույն, մեթոդապես ճիշտ միջոցներ:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց) և ցուցադրում:	Գործնական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական), վարժություններ:	Անհատական ներկայացում:
Ընդհանուր մասնագիտական կրթամաս	ՈՒԱ 12	Կիրառի հայոց լեզվի գրավոր և բանավոր հաղորդակցության հիմնական մեթոդները, միջոցներն ու ձևերը:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային, անհատական և զույգերով աշխատանք. գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 13	Ներկայացնի հայերենի տեղը լեզուների ծագումնաբանական, տիպաբանական և տարածքային դասակարգման մեջ:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական աշխատանք, տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային,	Բանավոր անհատական հարցում, գրավոր հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր/գրավոր հարցում :

				ճանաչողական):	
	ՈՒԱ 14	Համադրի գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի ու արևմտահայերենի կառուցվածքային հատկանիշները, հնչյունական, բառային և քերականական համակարգերը, բացատրի հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 15	Բնութագրի հայոց լեզվի բարբառները և թվարկի բարբառների դասակարգման սկզբունքները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, հավաքագրական աշխատանք, թղթապանակների կազմում, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	Բանավոր կամ գրավոր անհատական հարցում:
	ՈՒԱ 16	Մեկնաբանի հայոց լեզվի և հայ գրականության տեսության և պատմության հիմնարար գիտելիքները:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ:	Անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 17	Կատարի բնագրի գրականագիտական, պատմաբանասիրական, լեզվառճական վերլուծություն և մեկնաբանություն:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, տեսական նյութի վերլուծություն, թղթապանակների կազմում, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ:	Տեքստի գրականագիտական և պատմաբանասիրական վերլուծություն (գրավոր[4] կամ բանավոր եղանակով):
	ՈՒԱ 18	Նկարագրի, մեկնաբանի, վերլուծի հայ գրականության պատմության (հին և	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում,	Խմբային և անհատական հետազոտություն, գործնական	Բանավոր կամ գրավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ

[4] Գրավոր աշխատանքը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝ բովանդակային կառուցվածքը, փաստարկումները, ստեղծագործականությունը, ոճը, ձևավորումը, ծավալը, գրագիտությունը, հղումների առկայությունը:

		միջնադարյան, նոր, նորագույն), հայ բանա-սիրության արդի փուլի զարգացման միտումները:	բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն, թղթապանակների կազմում:	փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր/գրավոր հարցում:
	ՈՒԱ 19	Մասնակցի գրական և գիտական բանավեճերին, բանավոր, գրավոր և էլեկտրոնային տարբերակներով ներկայացնի զեկուցումներ, հետազոտություններ:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական հետազոտություն, ռեֆերատների, զեկուցումների պատրաստում և ներկայացում, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ:	Բանավոր և գրավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր և գրավոր հարցում:
	ՈՒԱ 20	Գնահատի մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների դերը:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր/գրավոր հարցում հարցում:
Հատուկ մասնագիտական կրթամաս (բանասիրության բակալավր)	ՈՒԱ 21	Կատարի գիտական ղեկավարի օգնությամբ բանասիրության կոնկրետ թեմայի վերաբերյալ մասնագիտական հետազոտական աշխատանք:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական հետազոտություն, գործնական մեթոդներ, տեսական նյութի վերլուծություն:	Գրավոր անհատական աշխատանքի բանավոր ներկայացում,
	ՈՒԱ 22	Կազմի գիտական համառոտագրություններ, ծանոթագրություններ, մատենագիտական ցանկեր՝ ժամանակակից մեթոդ-ների՝ գրական սկզբնաղբյուրների որոնման և հայտնա-բերման համակարգի կիրառման ճանապարհով:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Վերարտադրողական մեթոդներ, գործնական մեթոդներ (վարժություն, աշխատանք գրքով, աշխատանք բնագրերի շուրջ), խմբային և անհատական հետազոտություն:	Տեքստի գրականագիտական և պատմաբանասիրական վերլուծություն (գրավոր կամ բանավոր եղանակով):
	ՈՒԱ 23	Կարողանա գիտական և գեղարվեստական տեքստեր ուսումնասիրել, դրանք սրբագրել, խմբագրել, ծանոթագրել:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Վերարտադրողական մեթոդներ, գործնական մեթոդներ (վարժություն, աշխատանք գրքով, աշխատանք բնագրերի շուրջ), խմբային և անհատական հետազոտություն:	Տեքստի գրականագիտական և պատմաբանասիրական վերուծություն (գրավոր կամ բանավոր եղանակով):

	ՈՒԱ 24	Կմասնակցի մշակութային, հասարակական, հումանիտար-կազմակերպական հաստատություններում, գրահրատա-րակչական, զանգվածային լրատ-վամիջոցների և հաղորդակցական ոլորտներում զանա-զան ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքներին:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական և խմբային աշխատանքներ:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր կամ գրավոր հարցում:
Հատուկ մասնագիտական կրթամաս (մանկավարժության բակալավր)	ՈՒԱ 25	Կատարի գիտական ղեկավարի օգնությամբ մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի թեմայով մասնագիտական հետազոտական աշխատանք:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական հետազոտություն, տեսական նյութի վերլուծություն, գործնական մեթոդներ:	Գրավոր հետազոտական աշխատանքի բանավոր ներկայացում:
	ՈՒԱ 26	Կարողանա միջնակարգ և ավագ դպրոցներում հայոց լեզու և հայ գրականություն դասավանդել, արտադասարանական միջոցառումներ կազմակերպել, պատրաստել ուսում-նամեթոդական նյութեր:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Անհատական աշխատանք, գործնական մեթոդներ, թղթապանակների կազմում, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական), պրոբլեմային իրավիճակի վերլուծություն:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 27	Կիրառի ժամանակակից մանկավարժական մե-թոդներ:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Խմբային և անհատական հետազոտություն, հավաքագրական աշխատանք. գործնական մեթոդներ, վերարտադրողական մեթոդներ, խաղեր (դիդակտիկական, դերային, ճանաչողական):	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:
	ՈՒԱ 28	Կմասնակցի կրթական, հասարակականման-կավարժական ոլորտներում զանազան ծրագրերի մշակման ու իրակա-նացման աշխատանքներին:	Խոսքային մեթոդներ (դասախոսություն, զրույց, քննարկում, բանավեճ) և զննական մեթոդներ, ցուցադրում:	Վերարտադրողական մեթոդներ, անհատական աշխատանք, պրոբլեմային իրավիճակի վերլուծություն:	Բանավոր անհատական հարցում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում:

Բաժին 3.

Կրթական ծրագրերի վերանայումը

3.1.Կրթական ծրագրերի վերանայման գործընթացի հիմնական քայլերը

Կրթական ծրագրի վերանայումը համակարգված շարունակական գործընթաց է, որը ենթադրում է կրթության ոլորտում առաջավոր փորձի, նոր գաղափարների որոնում, փոխառում և տեղայնացում, ինչը նպաստում է ուսումնառության գործընթացի կատարելագործմանը և բուհի առաքելության իրականացմանը:

Կրթական ծրագրի վերանայման հիմնական փուլերն են՝

1. Կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խմբի ձևավորումը

Կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խմբում կարող են ընդգրկվել՝

- բուհի որակի ապահովման կառույցի ներկայացուցիչները,
- ծրագրի մշակման աշխատանքային խումբը,
- այլ բուհերի կրթական ծրագրերի մշակման աշխատանքային խմբերի ներկայացուցիչները,
- ծրագրի իրականացմանը ներգրավված դասավանդող անձնակազմի ներկայացուցիչները,
- ծրագրում ներգրավված ուսանողները,
- այլ համապատասխան շահակիցները, այդ թվում՝ գործատուները, կրթության որակի ապահովման պետական կառույցների ներկայացուցիչները:

2. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբի խնդիրներն են՝

- բացահայտել՝ փոփոխվե՞լ են արդյոք ծրագրի սկզբնական նպատակները,
- առկա են դեռ համապատասխան ռեսուրսներ ծրագրի իրականացման համար,
- արդյոք անհրաժեշտություն կա՞ ծրագրում հաշվի առնել հետազոտության, տեխնոլոգիաների, ուսումնառության և դասավանդման ոլորտների վերջին զարգացումները,
- փոփոխվե՞լ են արդյոք ուսանողների պահանջները, գործատուների ակնկալիքները ծրագրի նկատմամբ և ծրագրի շրջանավարտների զբաղվածության հնարավորությունները,
- փոփոխվե՞լ են արդյոք ուսումնառության կարիքները և անհրաժեշտություն կա՞ կրթական ծրագիրը համապատասխանեցնել նշված փոփոխություններին,
- արդյո՞ք ծրագրի հաստատումից հետո ի հայտ են եկել նոր ռազմավարական առաջարկներ,
- ինչպե՞ս է ուսանողների առաջադիմությունը ազդում կրթական ծրագրի վերանայման գործընթացի վրա,
- ինչպե՞ս են ուսանողական հարցումները և ֆոկուս խմբերը ազդում ծրագրի վերանայման անհրաժեշտության վրա,
- ուսանողների հետ հետադարձ կապի արդյունքում ի՞նչ հիմնահարցեր են բարձրացվել վերջին չորս տարիների ընթացքում, որոնք պետք է հաշվի առնվեն ծրագրի վերանայման դեպքում,
- ինչպե՞ս են ուսանողները ներգրավված կրթական ծրագրերի վերանայման գործընթացում,
- արդյո՞ք կրթական ծրագրի նպատակները, նախատեսվող կրթական վերջնարդյունքները, գնահատման ռազմավարությունը և դասավանդման մեթոդները ենթակա են փոփոխության ծրագրի վերանայման արդյունքում:

Կրթական ծրագրի վերանայման համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝



3.2. Կրթական ծրագրերի բենչմարքինգը

Բենչմարքինգի հասկացությունը

Բենչմարքինգ բառը առաջացել է «benchmark» անգլերեն բառից, որը նշանակում է չափման գիծ: Վերջին տասնամյակում բենչմարքինգը դարձել է բուհերի ռազմավարության կարևոր մաս: Այն համեմատություն է էտալոնային որևէ միավորի հետ, որը նպաստում է կառավարման առաջավոր մեթոդների ներդրմանը: Բենչմարքինգը բուհերի գործունեության համադրության, համեմատության, չափման մշտական գործընթաց է, արդեն գոյություն ունեցող լավագույն փորձի վերլուծություն և այդ փորձի ադապտացում՝ բուհի յուրահատկությունների և առանձնահատկությունների հաշվառմամբ:

Բենչմարքինգը կարևոր տվյալների հավաքման և ներկայացման մեթոդ է, որը թույլ է տալիս համադրել տարբեր բուհերի կամ կրթական ծրագրերի արդյունավետությունը, որոշել լավագույն փորձը, ժամանակին ախտորոշել խնդիրները, հայտնաբերել ուժեղ կողմերը: Այն նաև որակը սահմանելու միջոց է:

Բենչմարքինգ կարող է արվել՝

- մասնագետների միջև, երբ հաջողությունների հասած մասնագետի փորձը ուսումնասիրվում և կիրառվում է,
- բուհի ներսում տարբեր ստորաբաժանումների միջև, երբ յուրացվում է լավագույն աշխատառճն ունեցող կամ լավագույն արդյունքների հասած ստորաբաժանման փորձը,
- բուհերի միջև, երբ մեծ հաջողությունների հասած բուհերի փորձը վերլուծվում և կիրառություն է գտնում զարգացող բուհում,
- բենչմարքինգի կարող են ենթարկվել բուհական գործունեության այս կամ այն կողմը, գործընթացները, ինչպես նաև առանձին մասնագիտական կրթական ծրագրերը:

Ուղղակի արդյունք	Անուղղակի արդյունք
Վերլուծվում է բուհի գործունեությունը	Պարզորոշ ի հայտ է բերում բուհի վիճակը
Համեմատվում են բուհի ներքին ստորաբաժանումները	Կանխորոշվում են նպատակները
Որոշվում են լավագույն ձեռքբերումները	Ստուգվում է բիզնես ռազմավարությունը
Պարզվում են բացթողումները	Բարձրանում է բուհի մրցունակությունը
Գնահատվում են այլընտրանքային լուծումները	Նախաձեռնում է անընդհատ բարելավում

Բենչմարքինգի սկզբունքները

Փոխհամաձայնություն: Բենչմարքինգ հնարավոր է անցկացնել միայն փոխադարձ համաձայնությամբ, որը վերաբերելու է և՛ տրամադրվող տեղեկատվության սահմաններին, և՛ հրապարակայնության աստիճանին:

Նույնականություն: Համեմատվող ոլորտները և գործընթացները պետք է նույնը լինեն:

Չափում: Մի քանի բուհերի արդյունքների չափման միջոցով լավագույն փորձի հայտնաբերում:

Հավաստիություն: Բենչմարքինգը պետք է հիմնվի փաստերի, կոնկրետ վերլուծությունների վրա:

Բենչմարքինգի փուլերը

Այս փուլերը ներկայացնում են բենչմարքինգի անիվը, որը գործում է նաև մշտադիտարկման պայմաններում:



Բենչմարքինգի իրականացման պլանը